Արձանագրություն N 3

ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ԲԵՆԶԻՆ/2023/Հ-80 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

ք.Երևան

<< 22>> 11. 2023թ.

Մասնակցում էին՝

- ՀՀ ՆԳՆ ՓԾ թիկունքի և նյութատեխնիկական ապահովման վարչության պետի պարտականությունները ժամանակավոր կատարող, փ/ծ գնդապետ Ռ. Քլինջյան (հանձնաժողովի նախագահ),
- ՀՀ ՆԳՆ ՓԾ թիկունքի և նյութատեխնիկական ապահովման վարչության փրկարարական տեխնիկայի, սարքավորումների և վառելիքաքսուքային նյութերի ապահովման բաժնի պետ, փ/ծ փոխգնդապետ Հ. Անտոնյան,
- ՀՀ ՆԳՆ ՓԾ թիկունքի և նյութատեխնիկական ապահովման վարչության փրկարարական տեխնիկայի, սարքավորումների և վառելիքաքսուքային նյութերի ապահովման բաժնի հրահանգիչ, փ/ծ մայոր Տ. Հովհաննիսյան,
- ՀՀ ՆԳՆ Ո ՏՎ ԳՀ բաժնի տեսուչ, ոստիկանության լեյտենանտ Հ.Ասատրյան (հանձնաժողովի քարտուղար):

Օրակարգ՝

ՀՀ ՆԳՆ կարիքների համար բենզինի ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ԲԵՆԶԻՆ/2023/Հ-80 ծածկագրով ընթացակարգի գնահատման նիստում արձանագրվեց՝

1. Տեղեկություն ընթացակարգի ընթացքի մասին.

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ԲԵՆԶԻՆ/2023/Հ-80» ծածկագրով գնման ընթացակարգը կասեցվել էր 1 աշխատանքային օրով և «ՍԻ ՓԻ ԷՍ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ » ՍՊԸ-ին առաջարկվել էր 1 աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Շտկումը կատարվել է ժամանակին: Գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել և գնահատվել է «ՍԻ ՓԻ ԷՍ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ » ՍՊԸ -ի ներկայացված շտկված հայտը, այն գնահատվել է բավարար:

Հանձնաժողովը որոշեց՝

«ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ԲԵՆԶԻՆ/2023/Հ-80» ծածկագրով գնման ընթացակարգը ընտրված մասնակից ճանաչել «ՍԻ ՓԻ ԷՍ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ » ՍՊԸ-ին: Անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ: Անգործության ժամկետի ավարտից հետո «ՍԻ ՓԻ ԷՍ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ » ՍՊԸ-ին կառաջարկվի կնքել պայմանագիր:

Ընդունվեց որոշում՝ կողմ 3, դեմ 0 :

Հանձնաժողովի նախագահ՝ Ռ. Քլինջյան

Հանձնաժողովի անդամներ՝ Հ. Անտոնյան

Տ. Հովհաննիսյան

Քարտուղար՝ Հ. Ասատրյան